

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՄԱՍՈՒԿՅԱՆ ԱՐԱՄ ԱՐՄԵՆԱԿԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԽՈՇՀՐԴԱՅԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ե.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական դեկանար

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Յակոբյան Ա.Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր  
Վիրաբյան Ա.Ս.

պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Գևորգյան Ե.Գ.

Առաջատար կազմակերպություն

Խ. Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2012 թ. հունիսի 15-ին  
ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի Նայոց  
պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ  
Բաղրամյան, 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի  
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. մայիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Յ.Դ.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ

**Թեճայի գիտական նշանակությունն ու արդիականությունը-խորհրդային Հայաստանում քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների Վերացման գործընթացները հայ պատմագիտության մեջ առանձին ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել: Այդ գործընթացները տեղի էին ունենում միակուսակցական կառավարման համակարգի հաստատմանը գուգընթաց և դրա հիմնական պահանջներից մեկն էին: «Պրոլետարական դիկտուտուրան» որպես գաղափարախոսական գլխավոր հիմնադրույթներից մեկն ընդունած բոլշևիկները՝ միակուսակցական կառավարման համակարգ ձևավորելու համար պետք է ասապարեզից հեռացնեին բոլոր այլ քաղաքական կազմակերպություններին: Այդ գործընթացի հետագոտությունն առավել հիմնավոր ու ամբողջական կդարձնի Հայոց պատմության շրջադարձային ժամանակաշրջաններից մեկի ներկայացումը: Սրանով կարևորվում է քաղաքական կուսակցությունների լուծարման գիտական ուսումնասիրությունը, որը միաժամանակ բացահայտում է Խորհրդային Հայաստանում 1920-ականներին բոլշևիկյան մենիշխանական կառավարման համակարգի ձևավորման որոշ խնդիրներ, ինչն անհրաժեշտ է այդ գործընթացների ամբողջական նկարագիրը պատկերացնելու առումով:**

1920-1930-ական թվականներին ԽՄՀՄ-ում, բնականաբար և Հայաստանում, ձևավորվեց և ամրագրվեց ամբողջատիրական քաղաքական համակարգ: Երկար տարիներ բազմակուսակցական համակարգի բացակայությունն իր բացասական ազդեցությունը բողեց նորանկախ Հայաստանի կյանքի. Երկրի ժողովրդավարացման գործընթացների, մարդկանց մտածելակերպի վրա: Ուստի այս խնդիրի հետագոտությունն այժմեական է և ուսանելի: Սա մի հիմնախնդիր է, որ Վերջին տարիներին դարձել է պատմաբարանների, քաղաքագետների, փիլիսոփանների հետազոտության առարկա ամբողջ հետխորհրդային տարածքում:

**Ատենախոսության նպատակն ու խնդիրները-Ատենախոսության նպատակն է արխիվային վավերագրերի, մանուլի, հուշագրությունների և պատմագիտական գրականության հիմնա վրա ամենալավակալ դիրքերից լուսաբանել Խորհրդային Հայաստանում ոչ պրոլետարական համարվող կուսակցությունների լուծարման գործընթացները: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.**

- ընդհանուր գծերով ներկայացնել մինչխորհրդային Հայաստանում գործող քաղաքական կուսակցությունները և նրանց գործունեությունը, հատկապես իրար սուր հակադիր Հ.3. Դաշնակցության և բոլշևիկների փոխհարաբերությունները,

- բացահայտել Խորհրդային Հայաստանում ոչ կոմունիստական կուսակցությունների և կազմակերպությունների վերացմանը նպաստող արտաքին և ներքին գործոնները,

- Խորհրդային Միության և կովկասյան համայնապատերի վրա ցույց տալ կոմունիստական կուսակցությանն ու խորհրդային պետությանն այլախոհ և թշնամական համարվող բոլոր կուսակցությունների ու կազմակերպությունների լուծարման գործընթացները,

- ցույց տալ նաև գաղափարաքաղաքական և գործնական հետապնդում-հալածանքներն այդ կուսակցությունների ընդհատակյա խմբերի ու անհատների հանդեպ 1920-ական թվականներին,

- հիմնավորել, որ Վերոնշած գործընթացները դարձան Խորհրդային Հայաստանում նիակուսակցական քաղաքական համակարգի ձևավորման գլխավոր պայմաններից մեկը,

- Աներկայացմել Խորհրդային Հայաստանում միակուսակցական համակարգի թռղած ազդեցությունը և հետևանքները:

**Ալտենախոսության մեթոդաբանական հիմքը**-Ալտենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմահամեմատական և պատմաքննական մեթոդաբանությամբ, արխիվային վավերագրերի, հրապարակված սկզբնաղբյուրների, մանրվի, ուսումնասիրությունների հանադրման և վերլուծության սկզբունքով։ Զերծ ենք եղել կուսակցական կանխակալ մոտեցումից ու նախասիրություններից։ Եղրահանգումները կատարվել են միայն փաստական նյութի հիմնան վրա, որոնց մի մասն առաջին անգամ է դրվում գիտական շղանառության մեջ։

**Ալտենախոսության ժամանակագրական շրջանակները**-Ալտենախոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 1920-ական թվականները՝ ներկայացնելով Հայաստանում գործող կուսակցությունների գործունեությունն ու վերացումը։

**Ալտենախոսության գիտական նորույթը ու գործնական նշանակությունը**-Խորհրդային Հայաստանում ոչ պրոլետարական կուսակցությունների ու կազմակերպությունների վերացման գործընթացների վերաբերյալ հատուկ և ամբողջական ուսումնասիրություն չի կատարվել, ուստի պատմագիտության համար չափազանց կարևոր է այդ խնդրի նորովի և անաշառ լուսարանումը։ Աշխատանքում առաջին անգամ քննարկվել են Հայաստանում ոչ կոմունիստական կուսակցությունների վերացման արտաքին այնպիսի գործուներ, ինչպիսիք են թուրքական ու իրանականը։

Փորձ է արվել Հայաստանում խորհրդային կաղօքերի իրական հաստատումը դիտարկել որպես գործընթաց, որը սկսվել է 1920 թ. նոյեմբերի 29-ից և ավարտվել 1922 թ. փետրվարին՝ ինչի կարևոր մասն է եղել ոչ կոմունիստական կուսակցությունների վերացումը։

Քննարկողինս ամբողջական տեսքով ներկայացվել է Խորհրդային Հայաստանում ոչ կոմունիստական բոլոր կուսակցությունների և այլ կազմակերպությունների վերացման պատմությունը, տրվել են այդ գործընթացների վրա ազդող հիմնական գործուները և դրանց հետևանքները։ Ալտենախոսությունը գիտականց բացի ունի նաև ճանաչողական, քաղաքական և գործնական նշանակություն։ Քաղաքական կուսակցությունների վերացման և միակուսակցական կառավարման համակարգի ծևակորման անաշառ ուսումնասիրությունը կարող է ուղեցույց հանդիսանալ ժամանակակից Հայաստանի ժողովրդավարական քաղաքական համակարգի հաստատման համար, քանի որ դրամից կատարված հետևողաբար խիստ արդիական են և օգտակար։ Ուսումնասիրությունը կարող է ուսանելի լինել պատմաբանների, քաղաքագետների, սոցիոլոգների և հասարակագիտական այլ առարկաների հետազոտողների, ինչպես նաև գործնական քաղաքականությամբ գրադարձների համար։

**Ալտենախոսության փորձաքննությունը**-Ալտենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի կողմից։

**Թեմայի ուսումնասիրության աստիճանը (աղբյուրների և գրականության տեսություն)**-Խորհրդային Հայաստանում քաղաքական կուսակցությունների վերացման գործընթացն ու միակուսակցական կառավարման համակարգի հաստատումն ամբողջական ու համակողմանի ներկայացնելու համար հիմնականում օգտագործել ենք Հայաստանի Ազգային արխիվում (ԴԱԱ) և ՀՀ Ազգային անվտանգության ծառայության արխիվի (ՀՀ ԱԱԾ) Կարձաքած գործերի ֆոնդում (ԿԳՖ) պահպանվող փաստաթղթերը։ Առաջին հերթին, ուսումնասիրել ենք ՀԱԱ-ում

պահպանվող այն ֆոնդերի գործերը, որոնք վերաբերում են կուսակցություններին և կազմակերպություններին, ՀՍԽՀ ԱՀ և ՊԲԿ աշխատանքներին, նաև պահպանվելու ժամանակակից տարիներին ՀՀ ԱԱԾ-ի արխիվից ՀԱԱ փոխանցված նյութերը, Հայաստանի կոմկուսի, խորհրդային ու գործադիր նարմինների ձևակորնանը և ուսումնասիրվող թեմային առնչվող այլ նյութերը: 1918-1920-ական թվականներին գործող կուսակցությունների գործունեությանը վերաբերող արխիվային փաստաթղթերը գգալիրեն օգտագործվել են Վ.Ղազախսեցյանի, Լ.Խուրշջույյանի, Ա.Չակորյանի, Ա.Մանուկյանի և ուրիշ հետազոտողների աշխատություններում, որոնց կանորադառնանք ստորև, ուստի որոշ դեպքերում, հետազոտությունն ավելի անբողջական ներկայացնելու նպատակով անդրադարձել ենք այդ նյութերին՝ դրանց տալով մեր մեկնաբանությունները կամ լրացնելով շրջանառության մեջ գտնվող փաստաթղթերի բովանդակությունը:

Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրման համար, բացի անտիպ փաստաթղթերից, մեր կողմից օգտագործվել են խորհրդային և հետխորհրդային շրջանում հրատարակված սկզբնադրյուններ՝ փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ<sup>1</sup>, պարբերական մանուկ<sup>2</sup>, բազմաթիվ այլ մենագրական ուսումնասիրություններ:

Խորհրդային պետության գոյության տարիներին ուսումնասիրվող խնդիրը, հասկանալի պատճառներով, չի եղել առանձին հետազոտության առարկա: Այն հիմնականում ներկայացնելով է այլ հիմնախնդիրներ ներկայացնելիս: Խնդիրին անդրադարձ կա բազմաթիվ աշխատություններում, այդ թվում «Դայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակում, որն, անկասկած, լինելով արժեքավոր գործ, այնուամենայնիվ, օբյեկտիվորեն չէր կարող գերծ լինել գաղափարական կաղապարներից, իսկ «Դայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերը» նման մոտեցման հավաքական դրսևորման օրինակ կարելի է համարել<sup>3</sup>:

Խորհրդահայ պատմաբանների կատարած բազմաթիվ, մեծ մասամբ շատ օգտակար հետազոտություններում, համապատասխան գաղափարական մոտեցուներով, հիմնականում ներկայացնելով է խորհրդային կարգերի հաստատման և ամրապնդման գործընթացի պատմություն՝ առանց ուշադրություն դարձնելու այդ

<sup>1</sup>Դայակական ՍՍՌ օրենքների, Գերագույն Սովետի նախագահության հրամանագրերի և Դայակական կառավագության որոշումների ժամանակագրական ժողովածու, 1920 թ. նոյեմբերի 29-1938 թ. դեկտեմբերի 31, Ե., 1963, Դայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտարին բաղադրականության փաստաթղթերում (1828-1923), կազմ. Կիրակոսյան Զ.Ս., Սահակյան Ռ.Գ., Ե., 1972, Դայաստանի Դանրապետությունը 1918-1920 թթ.: Քաղաքական պատմություն (Փաստաթղթերի ժողովածու), կազմ. Գ.Գալյան, Վ.Ղազախսեցյան, Վ.Մելիքյան, Ս. Միջոյան, Ա.Վիրաբյան, Ենողափառական կոմիտեները Դայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), 1920 թ. նոյեմբեր-1922 թ. հունվար, Ե., 1974, 3.3. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմ. Վ.Ղազախսեցյան, Ե., 1999, Դայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.), կազմողներ Ա. Ա. Մելքոնյան, Վ. Ն. Ղազախսեցյան, Ե., 2008, ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների Ա համագումարը, Ե., 1922, ՍՍԿՊ-ճ բանաձևերում և որոշումներում, մ. 1, Ե., 1954, Իстория Советской конституции (в документах) 1917-1956 гг., М., 1957, Красная книга ВЧК. Т.1, 2, М., 1989, Конституция (Основной Закон) Союза Советских Социалистических Республик, М., 1977 և այլն:

<sup>2</sup>Խորհրդային Դայաստան, Կոմունիստ, Դայաստանի ծայր, Խայաստանի ծայր, Խայենիք, Խայաց, Սարտակը, ճակատամարտ, Պրաեծ և այլն:

<sup>3</sup>Դայ ժողովրդի պատմություն, ՀՍԽՀ ԳԱ հրատ., հ. 7, Ե., 1967, Դայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, տե՛ս նաև Դայ ժողովրդի պատմություն, Խմբ. Ս.Ներսիսյան, Ե., 1972 և այլն:

բարդ գարգացումների բոլոր յուրահատկություններին: Այդ իմաստով, բավարար ուշադրության չեն արժանացել նաև միակուսակցական կառավարման համակարգի ձևավորման բոլոր գործոնները, այդ թվում ազգային, ոչ պրոետարական կազմակերպությունների վերացման պատմությունը<sup>4</sup>: Այդ հեղինակները խորհրդային կարգերի հաստատման ու անրապնդման հարցերը լուսաբանելիս, եթե անդրադարձ են կատարել ոչ կոմունիստական կուսակցությունների վերացմանը, ապա դա համարել են անհրաժեշտ և օրինաչափ երևույթ: Բացառություն չեն նաև այդ տարիներին հրատարակված «Ուսաստանի ոչ պրոետարական կուսակցությունները: Պատմության դասեր» կոլեկտիվ աշխատությունը, որը նվիրված է 1917-1920-ական թվականներին Ուսաստանում (ԽՄՀՍ-ում) գործող ոչ պրոետարական կուսակցությունների գործունեությանը և նրանց վերացման պատմությանը: Այստեղ նույնպես գերակայում է այն միտքը, որ այդ կուսակցությունների վերացումն օրինաչափ երևույթ էր: Ուշագրավ է այն, որ գործունեիչական կուսակցությունների վերացումը նույնպես գերակայում է այն միտքը, որ այդ կուսակցությունների վերացումն օրինաչափ երևույթ էր: Այսպես, Դաշնակցությունը ներկայացված նրանց հետ կապված պատճական փաստերը: Այսպես, Դաշնակցությունը ներկայացված է որպես ժողովրդական տիպի մասր բուրժուական կուսակցություն, որի առաջնորդները Դաշնաստանում խորհրդային իշխանության դեմ պայքարելու նպատակով 1920 թ. Վերջին փախել են մենշևկովյան Վրաստան, որտեղ Դայ ժողովրդական կուսակցության հետ ստեղծել են «Դայերնիքի փրկության կոմիտե» և Անտանտի, Թուրքիայի և մենշևկովյան Վրաստանի օգնությամբ կազմակերպել Փետրվարյան ապստամբությունը, ապա, դրա պարտությունից ու Լեռնահայաստանի անկումից հետո՝ հեռացել արտասահման: Իսկ հնչակյանները հիշատակվում են Վրաստանում լեզվական գործող ոչ պրոետարական կուսակցությունների թվում, առանց նշելու, որ այն հայկական կուսակցություն է<sup>5</sup>:

Մեր ուսումնասիրության համար բավականին օգտակար են եղել վերջին տարիներին հրապարակված այդ շրջանի այլ հիմնախնդիրներին վերաբերող մի շարք աշխատություններ, որոնցում նորովի ներկայացվել և նաև ակտիվացվել են մեզ հետաքրքրող հարցերը<sup>6</sup>:

<sup>4</sup>Ալյայան Ծ.Պ., Ուսաստանի դերը հայ ժողովրդի պատճական ճակատագրում, Ե., 1981, Ալիսանյան Ս., Սովետական Ուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրում գործում (1917-1921), Ե., 1966, Յակոբյան Ա.Ա., Քաղաքացիական կրիվները Դաշնաստանում 1921 թ., Ե., 1948, Սարտունի Ալ., Խորհրդային ուղին, Թ., N 101, 1924, Նիկողոսյան Ս., Սովետները Դաշնաստանում, Ե., 1968, Զորհաբայան Ե., Սովետական Ուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 1979, Խարմանդարն Ը.Վ., Լենին и становление Закавказской федерации 1921-1923, Е., 1969, Էլչիբեկյան Ա.Մ., Установление Советской власти в Армении, Е., 1954, Էլչիբեկյան Ա.Մ., От ревкомов к Советам, Е., 1978 և այլն:

<sup>5</sup>Неполетарские партии России. Уроки истории, М., 1984, с. 10, 523-524.

<sup>6</sup>Զորհաբայան Ե., 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, Գալյոյան Գ., Դաշնաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999 թ, Խաչատրյան Կ., Դաշնության հարաբերությունները 1920-1922 թվականներին, Ե., 2007, Կարապետյան Մ., Գևորգյան Ե., Սելրունյան Ա., Նոր նյութեր Դայոց նորագույն պատմության մասին, Ե., 2009, Յակոբյան Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը, Ե., 2004, Յակոբյան Ա., Խորհրդային Դաշնաստանը Սոսկվայի և Կարսի պայմանագրերում, Ե., 2010, Սելիբյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրավանությունը, Ե., 2010, Սելրունյան Ա., Զավահարը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003, Վիրաբյան Ա., Դաշնաստանը Ստալինից մինչև Խորոշով. Դաշնակական-քաղաքական կյանքը (1945-1957 թթ.), Ե., 2001 և այլն:

Խնդիրը հնարավորինս ամբողջական դարձնելու համար քննադատաբար օգտագործել ենք իմանականում խորհրդահայ և ժամանակակից<sup>7</sup>, սփյուռքահայ<sup>8</sup> և օտարերկրյա հեղինակների<sup>9</sup>. Կուսակցությունների պատմությանը և կազմավորմանը վերաբերող աշխատություններ, մասնավորապես՝ Բ. Անանիկյանի, Ա. Կարինյանի, Լ. Չորմիսեանի, Լեոյի, Ալ. Սյասնիկյանի, Լ. Խուրշույյանի, Գ. Քեշյանի, Յ. Քաջազնունու, Մ. Վարանյանի, Ա. Վրացյանի, Կ. Դալլարյանի, Ս. Սարգսյանի, Վ. Ղազարյան, Յ. Տասնապետյանի, Գ. Խուրինյանի, Յ. Վարդանյանի, Ս. Մելիքյանի, Ա. Կիտուրի, Ա. Ենգոյանի, Մ. Դյուվերժեյի, Ե. Մելեշկինյանի և այլոց աշխատությունները:

Մինչ այժմ չի հստակեցվել հատկապես Դաշնակցություն կուսակցության տեսակը կամ տիպը, որին խորհրդային շրջանում որակում էին որպես բուրժուական կամ մանր բուրժուական կուսակցություն, իսկ դաշնակցական և նրանց համակրող հեղինակներն այս ներկայացնում էին որպես ազգային կուսակցություն: Այդ կարծիքն են արտահայտել նաև Լ. Խուրշույյանը, Ա. Չամբարձումյանը, Ա. Ջակոբյանը և ուրիշներ: Ելենով կուսակցություններին վերաբերող ժամանակակից գիտության, հատկապես՝ քաղաքագիտության մոտեցումներից, մենք առաջարկել ենք Դաշնակցությունը որպես ազգային համընդգրկուն կուսակցություն, որն իր հնարավորությունների սահմաններում ներկայացնել է հայ ժողովրդի գործեր բոլոր շերտերի շահերը: Նման բնույթի են նաև հայ պահնդական ՌԱԿ և Ս.Դ. Դնչակյան կուսակցությունները, բայց նրանք համընդգրկուն չեն:

Մենք համաձայն չենք կուսակցությունների պատմության խորագիտակ մասնագետ, ակադեմիկոս Լ. Խուրշույյանի այս պնդմանը, թե «փետրվարյան խորովության ջախճախումից հետո այլև ոչ մի խոսք չէր կարող լինել Հայաստանի տարածքում ոչ պրոլետարական կուսակցությունների հետագա գոյության նաևին: Հայաստանի ոչ պրոլետարական կուսակցությունները լիկվիդացվում են»<sup>10</sup>: Աշխատանքում մենք ցույց ենք տվել, որ կուսակցությունների կազմակերպական ու գաղափարական վերացումը կատարվել է աստիճանաբար՝ 1920-ական թվականների ընթացքում:

Հետխորհրդային շրջանում մեր ուսումնասիրության բուն խնդրին, ինչպես արդեն ասվել է, որոշ չափով անդրադարձել են հայրենի պատմաբաններ Վ.Ն.Ղազախեցյանը, Ա.Ս.Մանուկյանը և Ա.Ս.Ջակոբյանը<sup>11</sup> և ուրիշներ (Սպեցիֆիկների (ՀՍԴԲԿ)

<sup>7</sup>Անանիկյան Բ., Դաշնակցության գաղափարա-քաղաքական կրախը, Ե., 1974, Կարինյան Ա., Դաշնակցությունը և իր գինակիցները, Ե., 1932, Մարտունի Ալ., Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թ., N190, 1924, Խուրշույյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Ե., 1964, Լե, Թուրքահայ հեղափոխության գաղափարախոսություն, հ. Ա., Բ., Ե., 1994, Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական Ուսմկավար կուսակցություն (1908-1921), Ե., 2009, Խուրինյան Գ., Հայ հեղափոխական Դաշնակցության Առաջին ընդհանուր ժողովը, Ե., 1992 և այլն:

<sup>8</sup>Չորմիսեան Լ., Կուսակցությունները, Ե., 1995, Քաջազնունի Յ.Յ. Դ.Յ. Դաշնակցությունը անելիք չնմի այլեւս, Ե., 1994, Վարանեան Ս., Յ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, Տասնապետյան Յ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենեն մինչև ժ ընդի. ժողովի (1890-1924), Աթենք, 1988, Կիտուր Ա., Պատմութիւն Ս.Դ. Դնչակյան կուսակցութեան (1887-1962). Ա և Բ հատորները, Պեյրութ, 1962 և այլն:

<sup>9</sup>Դյուերժե Մ., Политические партии, М., 2007, Енгоян А.П., Идеологические основы социально - политических трансформаций в постсоветской Армении, Е., 2011, Политический процесс: Основные аспекты и способы анализа, под ред. Мелешкиноой Е.Ю., М., 2001 և այլն:

<sup>10</sup>Հայաստանում Սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922 թթ.), Ե., 1987, էջ 224:

<sup>11</sup>Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, ՅՅ և խորհրդային իշխանությունը (փաստաթրերի և նյութերի ժողովածու) կազմ. Վ.Ղազախեցյան, Ե., 1999, «Հայաստանը

մասին ատենախոսություն է պաշտպանել Վ.Ա.Շակորյանը<sup>12</sup>, Դաշնակցության և հայ բոլցիկների հարաբերությանն է նվիրել իր ուսումնասիրությունը Ռ.Փիրումյանը<sup>13</sup> և այլն):

Վ.Ղազախեցյանը դրան անդրադարձել է «Հայաստանը 1920-1940 թթ.» արժեքավոր աշխատության մեջ, սակայն այն ներկայացվել է մասնակիրեն և ընդհանուր գծերով և դա չի եղել հեղինակի տվյալ ուսումնասիրության հիմնական առարկան: Մեր խնդրի ուսումնասիրության համար պետք է կարևորենք այդ հեղինակի կողմից կազմված «ՀՅ Դաշնակցությունը և Խորհրդային իշխանությունը (փաստաթթերի և նյութերի ժողովածոր)»-ն, որտեղ ներկայացված են դաշնակցությանը վերաբերող բազմաթիվ նորահայտ փաստաբեր ու նյութեր: Ուշագրավ է նաև Ա. Սելքոնյանի և Վ. Ղազախեցյանի կողմից կազմված «Հայաստանը պետական գաղտնի փաստաթթերում (1922-1929 թթ.)» ժողովածոր, որում ամփոփված են Սոսկվայում լույս տեսած «Совершенно секретно. Лубянка Сталину о положении в стране (1922-1934)» բազմահատորյակի մինչև 2004 թ. տպագրված առաջին 7 հատորների 10 գրքերի՝ 1922-1929 թթ. Խորհրդային Հայաստանի վերաբերող նյութերը: Դրանցից շատերը օգտագործվել են մեր կողմից: Այդ ժողովածորի առաջարանում ներկայացված է նաև Յարվարդի համալսարանի պրոֆեսոր Տերենս Մարտինի կարծիքը, որն իրավացիորեն նշում է: «Պատմաբանների փորձը, ովքեր այդպես են վարվել (ՄՊԳԿ-ի տվյալները բաղադատել են գոյություն ունեցող մուս բոլոր տվյալների հետ-Ա.Ս.), բերել է այն եղանակացության, որ այդ տարիների «ՄՊԳԿ-ԳՃԿ-ի» ինֆորմացիան, որոշ բացառություններով, իսկապես վստահության արժանի է»<sup>14</sup>: Ա. Մանուկյանն իր «Քաղաքական բռնաճշումները Հայաստանում 1920-1953 թթ.» և «Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ.» աշխատություններում այն դիտարկել է Հայաստանում տեղի ունեցած քաղաքական բռնաճշումների տեսանկյունից՝ ներկայացնելով ՀՍԽՀ ԱՀ-ՊԲՎ գործունեությունը: Ա.Շակորյանը իր «Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունների հետագա ճակատագիրը ցույց տալու համար նույնական համառոտ անդրադարձել է այդ խնդրին<sup>15</sup>:

Այդ հարցը համառոտ ներկայացված է նաև ՀՅ ԳԱԱ վերջերս իրատարակված «Հայոց պատմության» բազմահատորյակի 4-րդ հատոր-ի 1-ին գրքում<sup>16</sup>, որտեղ, հասկանալի պատճառներով, այն մանրազնին քննարկման չի ենթարկվել:

Հ.3. Դաշնակցության և հայ բոլշևիկների հարաբերություններին է նվիրված Ռ.Փիրումյանի «Հայաստանը Հ.3.Դ.-Բոլշևիկ յարաբերությունների ոլորտում 1917-1921» բավականին ստվարածավալ աշխատությունը, որտեղ, ցավոք, հեղինակը գերծ

աշխատական գաղտնի փաստաթթերում (1922-1929 թթ.), կազմողներ Ա. Ա. Սելքոնյան, Վ. Ն. Ղազախեցյան, Ե., 2008, Մանուկյան Ա., Քաղաքական բռնաճշումներ Հայաստանում 1920-1953 թթ., Ե., 1999, Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Ե., 2002, Շակորյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920), Ե., 2005:

<sup>12</sup>Հակոբյան Վ.Ա., Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ծառափորումը և գործունեությունը (1900-1921թթ.), Աստենախոսություն, Ե., 2010:

<sup>13</sup>Փիրումյան Ռ., Հ.3.Դ.-Բոլշևիկ յարաբերությունների ոլորտում 1917-1921, Ե., 1997:

<sup>14</sup>Հայաստանը պետական գաղտնի փաստաթթերում (1922-1929 թթ.), կազմողներ Ա. Ա.

Սելքոնյան, Վ. Ն. Ղազախեցյան, Ե., 2008, էջ 13:

<sup>15</sup>Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920), Ե., 2005:

<sup>16</sup>Հայոց պատմություն/խմբ. Խորհրդարան՝ Վ.Բարխուդարյան և ուրիշ.։ Նորագույն ժամակաշրջան 1918-1945/խմբագրակազմ Վ.Ղազախեցյան և ուրիշ./, հ. 4, գ. 1, Ե., 2010:

չի մնացել սուբյեկտիվ գնահատականներից և, հիմնականում հենվելով դաշնակցական նի քանի հայտնի գործիչների հրապարակումների վրա, փորձել է ամեն կերպ արդարացնել դաշնակցության կեցվածքն ու գործունեությունը և զուգահեռաբար միայն վատաքանել հայ բոլշևիկներին<sup>17</sup>:

Ուստի խնդիրը մինչ այժմ կարու էր մանրամասն հետազոտության և մեկնարաննան:

**Ալտենախոսության կառուցվածքը և բովանդակությունը-Ալտենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ 8 ենթագլուխներով, եզրակացություններից ու օգտագործած աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է հանակարգչային շարվածք 154 էջ:**

**Ներածության** մեջ հիմնավորված է ուսումնասիրված բենայի գիտական արդիականությունը և նորությունը, աշխատանքի և բարձրացված հարցերի կարևորությունն ու ընդհանուր բնութագիրը: Յնարավորինս սեղմ ներկայացված է սկզբնաբրյունների և գրականության տեսությունը:

**Առաջին գլուխը՝ «Քաղաքական կուսակցությունները Յայաստանում խորհրդային կարգերի հաստատման նախօրյակին» կազմված է երկու ենթագլուխից:**

**Առաջին ենթագլուխը՝ «Քաղաքական կուսակցությունները խորհրդայնացման նախօրյակին»** հանառու ներկայացված են Յայաստանի խորհրդայնացման նախօրյակին հանրապետությունում գործող 8 կուսակցությունները, նրանց փոխհարաբերությունները, հատկապես Դաշնակցության և հայ բոլշևիկների միջև առաջացած սուր հակասությունները, որոնք իրենց կնիքը բոլեցին հետագա քաղաքական գարգառունների վրա:

Նախախորհրդային Յայաստանում գործում էին բոլժուական և մանր բոլորիւական որակվող Հայ Շեղափոխական Դաշնակցություն (ՇՀԴ), Հայ Ժողովրդական (ԺԾԿ), Հայ Սահմանադրական-Ռամկավար (ՌՍԿ) և սոցհալիստական ուղղվածության Ուսասատանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական (մեծշեցիկների), Սոցիալիստ-հեղափոխականների (էսէռների), Սոցիալ-դեմոկրատական Շնչակյան, ՇՄՐԿ (սպեցիֆիկների) կուսակցությունները և խորն ընդհատակ անցած և զգալիորեն բոլւացած բոլշևիկները<sup>18</sup>:

Մինչխորհրդային տարիներին Յայաստանում հիմնական քաղաքական պայքարն ընթանում էր դաշնակցականների ու բոլշևիկների միջև: Հայ բոլշևիկները կարծում

<sup>17</sup>Փիրունեան Ռ., Հ.3.Դ.-Բոլշևիկ յարաբերությունների ոլորտում 1917-1921, Ե., 1997:

<sup>18</sup>Տե՛ս Տասնապետյան ՅՌ., Հ.3. Դաշնակցությունը իր կազմութենան մինչև Ժ. ընդհ. ժողով (1890-1924), Արենք, 1988, Խուղինեան Գ., Հայ Շեղափոխական Դաշնակցության Առաջին ընդհանուր ժողովը, Ե., 1992, Վարանդեան Ս., Հ.3.Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992, Հայ Ժողովրդի պատմություն, ՐՍՍՀ ԳԱ հրատ., հ. 6, Ե., 1981, էջ 194-199, Սովետական Միության Կոմունիստական կուսակցության պատմություն, Ե., 1959, էջ 48-49: Հայ ազգային և Յայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.), Ե., 2003, էջ 130: Դակորյան Ա., Յայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920), Ե., 2005, էջ 89, 339-341, Դակորյան Ա., Սոցիալ-դեմոկրատական հայ կազմակերպություն՝ «Սպեցիֆիկներ»// Հայ ազգային և Յայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.), Ե., 2003, էջ 178, Վարդամյան Յ.Գ., Հայ բոլժուա-ազգայնական կուսակցությունների դիրքավորումը ռուսական առաջին հեղափոխության տարիներին (1905-1907 թթ.), Ե., 1975, էջ 161, Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցությունը (1908-1921), Ե., 2009 և այլն:

էին, որ ՀՅԴ-ն անվանապես լինելով սոցիալիստական ու գործելով բանվորների ու աշխատավորների շրջանում, դրանով իբր հայ պրոլետարիատի ու աշխատավորության ուշադրությունը շեղում է դասակարգային պայքարից: Բայց և պատմության անցյալի փորձը ցույց է տալիս, որ առանձին տակտիկական պահերին բոլշևիկների ու դաշնակցության միջև եղել է նաև փոխհասկացություն և համագործակցություն<sup>19</sup>: Դասկանալի է, որ դաշնակցության դեկավարների մեջ կային իրադրությունը սրակ գնահատող և հեռատես գործիչներ, որոնք անգամ փորձեցել են բանակցել բոլշևիկների հետ: Այսպես, հայ ժողովրդի երախտավոր Արամ Մանուկյանը դարավոր թշնամուց հայ ժողովրդի փրկության ճանապարհին երկրորդական համարելով գաղափարական տարածայնությունները՝ ՀՅԴ մի շարք գործիչների և, առաջին հերթին Ռուսում (Ստեփան Զորյան) հետ համախորհուրդ, փորձեց դաշնակից ծեռզ բերել՝ ի դեմք բոլշևիկյան Ռուսաստանի: Այդ նպատակով նաև հարաբերությունների մեջ մտավ Երևանի բոլշևիկների հետ, ինչպես նաև հեռակա կարգով մասնակցեց Թիֆլիսում Դայ Շեղափոխական Դաշնակցություն կուսակցության գործիչների կողմից Անդրկովկասի բոլշևիկյան դեկավարների հետ տարվող բանակցություններին: Այդ ընթացքում, Կովկասում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ստ. Շահումյանի ջանքերով ընդունվեց համագործակցության գաղտնի ծրագիր, որի առանցքը հայ-բոլշևիկյան ճակատի ծևավորումն էր թուրքերի դեմ՝ Կովկասի խորհրդայնացման պայմանով<sup>20</sup>: Դա իր ժամանակի համար բավականին իրատեսական և հայ ժողովրդի հետագա ճակատագրի համար օգտակար ծրագիր էր: Այստեղ կարեռենք նաև հայ ականավոր բոլշևիկ Ս. Շահումյանի դերակատարությունը, ով նույնպես հասկացել էր, որ հայ ժողովրդի փրկության համար կարելի է համագործակցել անգամ բոլշևիկների բացահայտ հակառակորդների՝ դաշնակցականների հետ: Ընդ որում, դրան, բացի Վերոնշած գործիչներից, մասնակցել են նաև Անդրանիկը, Յ. Զավրիյանը, Յ. Բագրատունին և ուրիշներ: Ցավոք, հայ գործիչների այդ ջանքերը հաջողություն չունեցան:

Դաշնակցականները բացասական արձագանքեցին Շոկտենքերյան հեղափոխությանը Ռուսաստանում: Դայաստանի բոլշևիկների և հիմնական կառավարող Դաշնակցության միջև դիմակայությունը սկսեց ուժեղանալ 1919 թ. կեսերից, երբ Վրաստանի և Ադրբեյջանի իշխանությունների հետապնդումների և հալածանքների հետևանքով շատ հայ բոլշևիկներ ապաստանեցին Դայաստանում: 1919 թ. սեպտեմբերին ՈՎ(թ)Կ ԿԿ-ն ճանաչում է Դայաստանի տարածքում գործող ԿԿ(թ)Կ-ն (Դայաստանի կոմունիստական (բանվորական) կուսակցություն), որը կազմակերպչութեան ենթակա կերպելու էր ՈՎ(թ)Կ Կովկասյան երկրային կոմիտեին: 1920 թ. գարնանը նրանց դիրքերը Դայաստանում բավականին ամրապնդվել էին: Դաշնակցության և կոմունիստաների հակամարտության դրսւորումներից էր 1920 թ. կոմունիստաների կազմակերպած Մայիսյան ապատանքությունը: Այն դրսում չէր ծրագրավորվել, այլ տեղում առաջացած, գրեթե ինքնարուսի իրադարձություն էր<sup>21</sup>:

**Երկրորդ ենթագլուխում՝ «Խորհրդային կարգերի հաստատումը և միակուսակցական կառավարման համակարգի ձևավորման առանձնահատկությունները» լուսաբանվել է Դայաստանում նոր կառավարման ինստիտուտների ձևավորման և նրանց վրա կոմկուսի ազդեցության կայացման գործըն-**

<sup>19</sup>Մելիքյան Վ., Խշանանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը, Ե., 2010, էջ 212-246:

<sup>20</sup>Արամ Մանուկյան: Փաստաթերի և նյութերի ժողովածու, գլխ. Խմբ. Ա. Վիրաբյան, Ե., 2009, էջ 15-16:

<sup>21</sup>Փիրումեան Ռ., նշված աշխ., էջ 199:

թացը, որն իրագործվում էր քաղաքական կուսակցությունների վերացման պայման-ներում և ունեցավ իր որոշ յուրահատկությունները:

Յայաստանի խորհրդայնացման նախօրյակին հանրապետության արտաքին և ներքին դրությունը ծայրահեռ ծանր էր, քանի որ Երկիրը հայտնվել էր Թուրքիայի հետ պատերազմական վիճակում և կրել էր ծանր պարտություն: Բացի այդ գոյություն ունեին տարածքային-սահմանային խնդիրներ, առկա էին տնտեսական ողբալի վիճակ, սով, հանճարակ, մեծաքանակ գաղթականներ և այլն, որոնք հրատապ լուծումներ էին պահանջում: Ասվածին պետք է հավելել այն, որ 1921 թ. տեղի է ունենում Փետրվայրյան հակախորհրդային ապսումբությունը, որն էլ ավելի է բարդացնում կացությունը Երկիր ու նոր իշխանության համար:

Մյուս կարևոր հանգամանքն այն էր, որ Յայաստանը գերազանցապես գյուղատնտեսական երկիր էր և գործնականում չըներ մեծաքանակ բանվոր դասակարգ, որի վրա կարող էր հենվել հայկոմկուսը՝ խորհրդային կարգեր հաստատելիս: Դրանից բխում էր նաև այն իրողությունը, որ այդ ժամանակ հրականում որոշակի քաղաքական ուժ չէին ներկայացնում Յայկոմկուսի կազմակերպությունները: 1920 թ. հունիսի 30-ին ՈԿ(թ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոն որոշում կայացրեց հիմնել ՀԿ(թ)Կ՝ նրան տալով կուսակցական մարզային կազմակերպության իրավունքները<sup>22</sup>: Զևսականորեն այդ կազմակերպության խնդիրն է դառնում սոցիալիստական ապստամբության կազմակերպումը Յայաստանում:

1920 թ. նոյեմբերի կեսերին ՈԿ(թ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի կողմից Բաքվում ստեղծվում է Յայաստանի Ռազմահետափոխական կոմիտե (ՌՈՇԿ)` Ս.Կասյանի նախագահությամբ: Միաժամանակ ստեղծվում է հայ կամավորներից կազմված «Յատուկ գումբ»<sup>23</sup>, որը 11-րդ կարմիր բանակի ուղեկցությամբ մտնում է Իջևան և նոյեմբերի 29-ին հրչակվում է խորհրդային հանրապետություն: Այդ նույն օրերին Երևանում բանակցություններ էին ընթանում ՀՀ կառավարության և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ.Լեգրանի միջև, ինչի արդյունքում 1920 թ. դեկտեմբերի 2-ին համաձայնագիր է ստորագրվում, որով ՀՀ կառավարությունը որոշ պայմաններով հեռանում է իշխանությունից՝ այն հանձննելով Դ.Կանայանի (Դրո) և ՈՍՖԽՆՀ կոմիսար Օ.Սիլիմի համատեղ դեկավարությամբ գործող գինվորական հրամանատարությանը՝ մինչև Յայաստանի Ռազմահետկոմի անդամների ժամանումը Երևան: Նրանք նույն օրը հրանան են ստորագրում Յայաստանը խորհրդային հանրապետություն հայտարարելու մասին: Դա, ի տարբերություն Յայաստանի Ռազմահետկոմի նոյեմբերի 29-ի հայտարարությամ, իրավական նորմերին համապատասխանող քայլ էր, ուստի կարելի է համաձայնել այն կարծիքների հետ, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ին է տեղի ունեցել իրական իշխանափոխությունը: Միաժամանակ տեղին է վաստակաշատ պատմաբան Վ.Ղազախեցյանի այն դիտարկումը, որ սխալ է այդ երկու օրերը մինչանց հակադրելը, քանի որ Երկուսն էլ պատմական իրողություններ են և դրանով իսկ Յայաստանի խորհրդայնացման գործնքացի քաղաքուցիչ տարրերն են<sup>24</sup>:

1920 թ. դեկտեմբերի 6-ին Յայաստանի Ռազմահետկոմը իշխանությունը վերցնում է իր ծեռքը: Յայաստանում խորհրդային իշխանության հաստատման առանձնահատկություններից էր նաև այն, որ ի տարբերություն Ռուսաստանի, որտեղ 1917-1918 թթ. բոլշևիկները ձախ էտեռների հետ ստեղծեցին կուլիցիոն

<sup>22</sup>Յայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, էջ 299:

<sup>23</sup>Խաչատրյան Կ., Յայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Ե., 2007, էջ 41:

<sup>24</sup>Ղազախեցյան Վ., Յայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, էջ 13:

կառավարություն, և Վրաստաճի, որտեղ 1921-1923 թթ. հշխանության մեջ տեղ տրվեց ձախ մենշևիկներին, Յայաստանում դա այդպես էլ չկենսագործվեց:

Իշխանությունը բոլշևիկներին անցնելու պահին Յայաստանում չկային ո՞չ խորհուրդներ, ո՞չ հենկոմներ: Դրանք նոր էին ստեղծվելու: Այդ պայմաններում երկրի կառավարման բարձրագույն գործադիր և փաստորեն օրենսդիր մարմինը դառնում է Յայիեղկոմը, որն իսկույն ծեռնամուխ է լինում առանձին նախարարություններ (ժողովրդական կոմիսարիատներ) ստեղծելու աշխատանքին: Նույն գործընթացներն են տեղի ունենում հարևան Վրաստանում և Ադրբեջանում<sup>25</sup>:

Սակայն, ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ դա իրավական տեսանկյունից դեռևս խորհրդային հշխանություն չէր, այսինքն Յայաստանում դեռևս խորհրդային կարգեր չին հաստատվել:

1921 թ. դեկտեմբեր-1922 թ. հունվար ամիսներին, համապատասխան ընտրությունների անցկացումից հետո՝ 1922 թ. հունվար-փետրվար ամիսներին տեղի է ունենում Յայաստանի քանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին հանագումարը, որին նաևնակցող 252 պատգամավորներից 218-ը կոմունիստներ էին: Դա նշանակում է, որ վճռական քայլ է կատարվում երկրում կոմունիստական մենիշխանության հաստատման ուղղությամբ: Կարելի է ասել, որ հենց այդ ժամանակ է իրավական տեսանկյունից հաստատվում խորհրդային հշխանությունը և ընդունվում ՅՄԽԴ առաջին Սահմանադրությունը, որն օրինականացնում է այդ հշխանությունը, մասնավորապես, Սահմանադրության 11-րդ հոդվածով օրենսդրության ամրապնդվում է պրոլետարիատի ոիկոսատուրան հանրապետությունում<sup>26</sup>:

Երկրորդ գլուխը՝ «Միակուսակցական կառավարման համակարգի ձևավորմանը նպաստող գործոնները և ոչ պրոլետարական կուսակցությունների վերացման գաղափարական իիմքերը» բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Յայաստանում միակուսակցական կառավարման համակարգի հաստատմանը նպաստող արտաքին գործոնները» ենթակայացված են Յայաստանում քաղաքական կուսակցությունների վերացմանը նպաստող արտաքին գործոնները: Խորհրդային Յայաստանում միակուսակցական կառավարման համակարգի հաստատումն անքակտելի է այլ կուսակցությունների վերացման գործընթացից: Այն ունեցել է ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին պատճառներ, ինչը պայմանավորված էր 20-րդ դարի սկզբներին նրան հարող տարածաշրջանում ընթացող բույն աշխարհաքաղաքական զարգացումներով:

Ուսասատան իմաերիալիզմի դեմ պայքարում կարևորում էր Թուրքիայի հետ բարեկանական հարաբերությունների հաստատումը: Քանի որ հայ ազգային կուսակցություններն առաջնահերթ խնդիր էին համարում Արևմտյան Յայաստանի զգատագործումը Թուրքիայի լոից, դրանց այն մասի գործունեությունը, որ իրականացվում էր Յայաստանում, միանշանակ բացասարար էր անդրադարձնում նրանց մերձեցմանը: Յայաստանի միջազգային հարաբերություններին առնչվող այդ

<sup>25</sup>Տե՛ս Յայոց պատմություն, /խմբ.խորհուրդ՝ Վ.Բարյուղարյան և ուրիշ.՝ Նորագոյն ժամանակաշրջան 1918-1945 (խմբագրակազմ Վ.Ղազախեցյան և ուրիշ.), հ. 4, գ. 1, Ե., 2010, էջ 290, Յակոբյան Ա., Սարգսյան Ա., Յայոց պատմություն, Ե., 2010, էջ 289, Իսմայլով Է., Օպերք ու աշխարհագրության պատմությունը Թուրքիայի լոից, դրանց այն մասի գործունեությունը, որ իրականացվում էր Յայաստանում, միանշանակ բացասարար էր անդրադարձնում նրանց մերձեցմանը: Յայաստանի միջազգային հարաբերություններին առնչվող այդ

<sup>26</sup>Յայկական ՍՍՌ օրենքների, Գերագույն Սովետի նախագահության հրամանագրերի և Յայկական ՍՍՌ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու, 1920 թ. նոյեմբերի 29-1938 թ. դեկտեմբերի 31, Ե., 1963, էջ 88:

ժամանակաշրջանի խնդիրները բավականին խորությամբ և բազմակողմանիորեն ուսումնաբարձրվել են մի շարք պատճեաբանների կողմից<sup>27</sup>: Սակայն դրանցում չի ներկայացված, մեր կարծիքով, ուշադրության արժանի հետևյալ իրողությունը, որն իր որոշակի նշանակությունն է ունեցել Հայաստանում միակուսակցական համակարգի հաստատման գործում: Խնդիրը վերաբերում է 1921 թ. մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև Մոսկվայում կնքված պայմանագրի 8-րդ և 1921 թ. հոկտեմբերի 13-ին Հայաստանի, Աղբեջանի, Վրաստանի և Թուրքիայի միջև կնքված Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածներին: Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածում նշվում է՝ «Պայմանավորվող 2 կողմերը պարտավորվում են իրենց տերիտորիաներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խնդիրի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի, կամ նրա տերիտորիայի մի մասի կառավարության դերն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև պարտավորվում է իրեն տերիտորիայում արգելել այնպիսի խնդիրի գոյությունը, որոնց նպատակն է պայքարը մյուս երկրի դեմ: Ռուսաստան ու Թուրքիան փոխադարձության պայմանով ստանձնում են նույնական պարտավորություն նաև Կովկասի Սովետական Հանրապետությունների վերաբերմամբ»: Գրեթե նույն հոդվածի կրկնությունը հանդիսացավ նաև Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածը<sup>28</sup>: Այսպիսով, այդ պայմանագրերը ևս մտնում էին այն արտաքին գործոնների շարքը, որոնք կամխորոշում էին Խորհրդային Հայաստանում քաղաքական կուսակցությունների (բացի ՀԿ(Բ)Կ-ից) վերացումը:

Այդ առումով արտաքին գործոն կարելի է համարել նաև հարևան Իրանի դիրքորոշումը: Ինչպես հայտնի է, Իրանի կառավարությունը թույլատրել էր Հայաստանի նախկին ռեժիմի ներկայացուցիչներին առանց արգելքի անցնել Իրանի տարածքը: Ուղղակի ընդհարման զննալով բոլշևիկյան հանրապետությունների հետ՝ Իրանը դարձել էր հենակետ Հայաստանից դուրս եկած հակախորհրդային ուժերի, մասնաւորապես՝ դաշնակցականների համար: Դրանից կարելի է եզրակացնել, որ Իրանի դիրքորոշումը, այդ կազմակերպությանն իր տարածքում հաստատվելու և այնտեղից Խորհրդային Հայաստանի դեմ գործողություններ իրականացնելու առումով, անուղղակի միջամտություն էր Հայաստանի ներքին կյանքին: Ուստի Իրանի դիրքորոշումը նույնանձն դրույմ էր բոլշևիկյան իշխանություններին վերացնելու ոչ կոմունիստական կուսակցությունները:

Սակայն, պետք է հասուն նշել, որ Հայաստանում միակուսակցական համակարգի ծևակորման արտաքին գլխավոր պայմանը Ռուսաստանն էր, ՈԿ(Բ)Կ-ն, նրա ծրագրային հիմնադրույթներն ու քաղաքականությունը:

Երկրորդ ենթագլուխում՝ «Հայաստանում միակուսակցական կառավարման համակարգի հաստատման ներքին ազդակները» ցույց է տրված Հայաստանում միակուսակցական կառավարման համակարգի հաստատմանը և քաղաքական կուսակցությունների լուծարմանը նպաստող ներքին ազդակները: 1920 թ. աշնան ամիսներին առավել խորացավ տնտեսական, հասարակական և ռազմաքաղաքական

<sup>27</sup>Զիրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 1974, Աղյամ Ծ.Պ. Ռուսաստանի դերը հայ ժողովոյի պատճական ճակատագործում, Ե., 1981, Սիմոնյան Յր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, Գալյոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, Խաչատրյան Կ. Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Ե., 2007 և այլն:

<sup>28</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, (1828-1923), կազմ. Կիրակոսյան Զ. Ս., Սահակյան Ռ. Գ., Ե., 1972, էջ 502, 521:

ճգնաժամը Հայաստանում: Այն, առաջին հերթին, կապված էր միջազգային անքարենապատ իրավիճակի հետ, որն անմիջական ազդեցություն էր թողնում ներքին կյանքի վրա: Ուստի Հայաստանում իշխանության կենտրոնացման ներքին ազդակներն ուղղակիորեն կապված էին արտաքին գործոններին: Մարդկային և նյութական կրոլուստներ ունեցած, պատմական տարածքներ կորցրած, զաղբական մեծաքանակ հայերով լցված, փաստացի քաղաքացիական պատերազմի մեջ գտնվող խորհրդային Հայաստանը կանգնել էր լրջագույն խնդիրների առաջ: Անչափ մեծ կրոլուստներ էր կրել գյուղատնտեսությունը՝ այդ տարիների Հայաստանի տնտեսության գլխավոր ճյուղը: Ցանքատարածությունները 1913 թ. համեմատ պակասել էին ավելի քան չորս անգամ, լիովին շարքից դուրս էր եկել ոռոգման համակարգը, ինչոք անգամ պակասել էր հացահատիկային կուլտուրաների արտադրանքը, ինչ անգամ՝ կարսոնֆիլինը: Սպառվել էին համրապետության գոեթե բոլոր մրերային պաշարները, երկիրը լցվել էր ոչնչով չափահովված թղթադրամներով<sup>29</sup>:

Հայաստանի տնտեսական ծանր կացությունն անմիջականորեն անդրադարձել էր բնակչության կենսանակարգակի վրա: Եթե դրան ավելացնենք, որ համրապետությունում կային ավելի քան երկու հարյուր հազար գաղթականներ, ապա կարելի է պատկերացնել, թե ինչ քարդ խնդիրների առջև էին կանգնել իշխանությունը վերցրած հայ կոմունիստները: Այս ամենի հաղթահարումը իշխանություններից պահանջում էր գերարված աշխատանք: Սակայն առանց կազմակերպական լուրջ քայլերի, կառավարման համակարգի կենտրոնացման, հնարավոր չեղ լինի կյանքի բնականոն մակարդակի վերականգնումը:

Պատմական պահը պահանջում էր կառավարման խիստ կենտրոնացում, որն այդ տարիների Հայաստանի համար նույնանում է միակուսակցական կառավարման համակարգի հաստատման հետ: Անկախ արտաքին պարտադրանքներից, որոնք ներկայացվեցին, Հայաստանը պետք է կենտրոնացներ կառավարումը, այլապես անհնարին կլիներ հայ ժողովրդի գոյատևումը իր հայրենիքում:

Երրորդ ենթագլխում՝ «Ոչ պրոլետարական կուսակցությունների և կազմակերպությունների վերացման գաղափարական հիմքերը» քննարկվում են Խորհրդային Հայաստանում ոչ կոմունիստական կուսակցությունների վերացման գաղափարական հիմքերը: Ինչպես հայտնի է, Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության գաղափարախոսության մեջ և ծրագրային դրույթներում կարևորվում էր իրենց նպատակներին հասնելու համար «պրոլետարական դիկտուտուրայի» հաստատման անհրաժեշտությունը: Դիկտուտուրա-անսահմանափակ իշխանություն հասկացությունն ինքնին դասակարգային մեծիշխանության հաստատում էր նշանակում: Տվյալ գործառույթը տրվում էր քանվոր դասակարգի շահերն արտահայտող քաղաքական ուժին՝ կոմունիստական կուսակցությանը, ժողովրդի կողմից ընտրված պատգամավորական խորհրդների (սովետների) իշխանության ծևով, ինչը կիրավվեց Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, քանի որ այդ երկրում գոյություն ունեցող խորհրդներում արդեն իսկ մեծամասնություն էին կազմում բոլշևիկները<sup>30</sup>: Հասկանալի է, որ Խորհրդային Հայաստանը պետք է գնար նույն ճանապարհով: Այդ տեսական պահանջները կյանքում իրականացնելու համար անհրաժեշտ էր վերացնել մյուս քաղաքական ուժերին, ինչը և իրագործվեց Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում:

<sup>29</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, ՀՍՍՇ ԳԱ հր., Ե., 1967, էջ 167-168:

<sup>30</sup> История Коммунистической партии Советского Союза, М., 1984, стр. 203.

Երրորդ գլուխը՝ «Ոչ պրոլետարական կուսակցությունների և կազմակերպությունների վերացման գործընթացները և դրանց հետևանքները» կազմված է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Դաշնակցության Դաշնակցություն կուսակցության լուծարման գործընթացը» մանրամասն ներկայացված է Դաշնակցություն կուսակցության լուծարման գործընթացը: Դաշնակցությունը հեղինակություն էր վայելում Դայաստանի հասարակության որոշ շրջանակներում, ուստի պայքարը նրա գործունեության դեմ դարձավ Դայաստանի նոր իշխանությունների գլխավոր խնդիրներից մեզը: Ընդ որում, հարցը դրված էր այդ կուսակցությունը չեզոքացնելու ոչ միայն բուն Դայաստանի տարածքում, այլև արտասահմանում<sup>31</sup>:

Դ.3. դաշնակցությունն այդ տարիներին Դայաստանում իսկապես ունեցել է թիւ թե շատ կազմակերպված գաղտնի խմբեր, որոնց անդամները հանդես էին գալիս հակակոմունիստական ահաբեկչական դրսնորումներով: Դասկանալի է, որ այդ կուսակցությունը նեկավարվում էր արտասահմանից<sup>32</sup>:

Դաշնակցության ակտիվ գործունեության մասին են վկայում ՆՍԽՀ ԱՀ-ՊԹՎ-ի 1920-ականներին կազմված տեղեկատվական բյուլետենների բովանդակությունները<sup>33</sup>: 1922-1929 թթ. նման ամփոփագրեր կազմվում էին նաև ԽՍՀՄ ԱՀ-ՊԹՎ-ում<sup>34</sup>: Դժվար չէ նկատել, որ այդ փաստերը բավականաչափ անհանգստացնող հանգամանք էին Դայկոնկուսի համար:

1920-ականներին Դայաստանում գործել են ՀՅԴ ընդհատակյա կազմակերպություններ, որոնց երևանյան կազմակերպությունը կրում էր «Մրգասատան», Լեճինականինը (Գյումրի)՝ «Քար» անունները: Այդ տարիներին դաշնակցական ուրիշ ընդհատակյա կազմակերպություններ են հայտնաբերվել նաև Էջմիածնում (Վաղարշապատ), Դարձագյաղում (Վայոց ձոր) և այլուր<sup>35</sup>:

Դայաստանում դաշնակցության ներուժը թուլացնելու առաջին գանգվածային քայլը կարելի է համարել 1921 թ. հունվար և փետրվար ամիսներին կոմունիստական իշխանությունների կողմից ավելի քան 1400 նախկին սպանների արտաքսումը: Դայ կոմունիստների նույականությունները դաշնակցության հնարավոր հակաբոշկիկյան գործողությունների վերաբերյալ անհիմն չեն<sup>36</sup>:

Դաշնակցությանը վարկաբեկելու և վերացնելու նպատակով՝ Դայաստանի կոմկուսի ղեկավարությունը հրապարակային դատավարություն-ներկայացում կազմակերպեց նրա դեմ: Այն տեղի ունեցավ 1921 թ. դեկտեմբերի 2-13-ին երևանում: Դատարանի նախագահը նրանց դեմ ներկայացուց 15 կետից բաղկացած մեղադրաններ<sup>37</sup>: Դատարանը Դաշնակցությանը նահվան դատապարտեց:

<sup>31</sup>Տե՛ս Արածեկով Գ., ՊՊԿ-Զապисքի չեկիստա, Բերլին, 1930.

<sup>32</sup>Նույն տեղում, էջ 115-116, Մարտիրոսյան Ռ.Ա., Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Ե., 1986, էջ 16:

<sup>33</sup>Տե՛ս ՀԱԱ, , ֆ. 1, ց. 2, գ. 75, թ. 79-80, ց. 4, գ. 70, թ. 128, ց. 5, գ. 44, թ. 127, ց. 5, գ. 66, թ. 135, ց. 68, թ. 111, ց. 6, գ. 111, թ. 177 և այլն:

<sup>34</sup>Տե՛ս Դայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.), կազմողներ Ա. Ա. Մելքոնյան, Վ. Ն. Ղազախեցյան, Ե., 2008:

<sup>35</sup>ՀՅ ԱՍԾ, ԿԳՖ , գ.13129 , ՀԱԱ ֆ. 1191, ց. 13, գ. 324:

<sup>36</sup>ՀՅԴ և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու) կազմ. Վ.Ղազախեցյան, Ե., 1999, էջ 10:

<sup>37</sup>Խորհրդային Դայաստան, 3 դեկտեմբերի 1921, ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 43, թ. 21, ֆ. 1457, ց. 1, գ. 199, թ. 8:

Բոլշևիկների համար դաշնակցության վարկաբեկման ու վերացնան կարեւորության մասին է խոսուն նաև այն փաստը, որ Յայաստանի կոնկուսի դեկավար մարմնները պարբերաբար քննարկում էին նրանց վերաբերող հարցեր<sup>38</sup>:

1923 թ. օգոստոսի 1-ին հրապարակվում է Դաշնակցություն կուսակցության կովկասյան խմբերի դեկապարագիան, որտեղ գրված էր, թե Դաշնակցություն կուսակցության կովկասյան կազմակերպությունները վճռել են չզրծել խորհրդային իշխանության դեմ Յայաստանում: Միաժամանակ, արտասահմանում գտնվող նրանց դեկավարները նոյն օրերին հաստատում են իրենց պատրաստակամությունը պայքարելու բոլշևիկյան կարգերի դեմ Յայաստանում<sup>39</sup>:

1923 թ. հուլիսի 26-ին ՀԿԿ Կենտկոմը Յայաստանի կոնկուսի գավառային բոլոր կոմիտեներին ուղարկեց Շրջաբերական նամակ, որտեղ կարևոր նշանակություն էր տրվում դաշնակցության «Վարկաբեկման և մերկացման» աշխատանքներին և դրանում մեծ դերակատարություն հատկացվում Զեկային<sup>40</sup>: Դաշնակցականների կազմալուծման գծով ստեղծված ՀԿԿ Կենտկոմին կից Եռյակի նիստը 1923 թ. հոկտեմբերի 26-ին որոշում է կայացնում դաշնակցականների Յանահայատանյան համագումար հրավիրել նոյեմբերի 20-ին<sup>41</sup>:

Նրանց «իմբանլիկիդացման» համագումարը նախապատրաստվում էր Յայաստանի կոմկուսի դեկավարության կողմից և դրա հետ կապված բոլոր միջոցառումները վերահսկվում էին: Ստեղծվել էր ՀՅԴ լիկվիդացիոն բյուրո, որի կազմի մեջ էին ընդգրկել Ա. Բակունցին, Ն. Կրնենանցին, Դ. Ավայանին և ուրիշների, որոնք, սկսած 1923 թ. հոկտեմբերից, բուռն գործունեության իմտացիա էին անում:

1923 թ. նոյեմբերի 20-23-ին Երևանում տեղի է ունենում նախկին շարքային դաշնակցականների Յանահայատանյան համագումարը, որի աշխատանքներին մասնակցում են 247 պատգամավորներ՝ ընտրված 4032 նախկին դաշնակցականների կողմից: Այդ համագումարում որոշում է կայացվում «լիկվիդացիայի ենթարկել ՀՅԴ բոլոր կազմակերպությունները Յայաստանում և վճռական կերպով արգելել ՀՅԴ արտասահմանում գտնվող բարձրագույն մարմիններին հրապարակ գալ կամ հայտարարություններ անել Յայաստանի կազմակերպությունների անունից»: Մինչ այդ, բոլշևիկները քայլեր ծեռնարկեցին նաև Բարպում դաշնակցությունը վերացնելու ուղղությամբ: Դրանով չավարտվեցին Դաշնակցություն կուսակցության վերացման գործընթացները: Նոյեմբերի սցենարով 1924թ. փետրվարի 1-3-ը կազմակերպվեց նախկին երիտասարդ դաշնակցականների Յանահայատանյան համագումարը<sup>42</sup>: Դաշնակցությանը վարկաբեկելու համար օգտագործվեց նաև գյուղտորհորդի քարտուղար Ս. Խուշոյանի սպանությունը:

Այսպիսով, 1920-ական և 1930-ականների առաջին կեսին տարիքեր եղանակներով Յայաստանում վերացվեցին դաշնակցականների բոլոր կազմակերպությունները և դադարեցվեցին նրանց գործունեության դրսևորումները:

Երկրորդ ենթագլխում «Սոցիալ-դեմոկրատական Յնչելյան, Յայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական, Սոցիալիստ-հեղափոխական (Եսէռների) և այլ

<sup>38</sup> Յայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, էջ 340, 351, ՀԱԱ, ֆ. 1, գ. 8, գ. 8, թ. 165-166, գ. 3, գ. 5, թ. 8, գ. 11, թ. 39:

<sup>39</sup> Նաև առաջարկում, 13 հոկտեմբերի 1923, Յայրենիք, N 6, ապրիլ, Բուստոն, 1923, էջ 3:

<sup>40</sup> ՀԱԱ, ֆ. 1, գ. 3, գ. 14 ա, թ. 5, գ. 3, գ. 14, թ. 35:

<sup>41</sup> Նոյեմբերի 1-ին, մասնաւոր տեղում, գ. 3, գ. 14 ա, թ. 5, գ. 3, գ. 14, թ. 35:

<sup>42</sup> ՀՅԴ և Խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու) կազմ. Վ. Ղազախեցյան, Ե., 1999, էջ, էջ 126, 145, 146, 202-206. Սարտակը, N 201, Թիֆլիս, 24 հոկտեմբերի 1923, ՀԱԱ, ֆ. 1457, գ. 1, գ. 229, թ. 1-76:

կուսակցությունների ու կազմակերպությունների վերացման գործընթացները» ցույց է տրված քաղաքական մյուս կուսակցությունների վերացման պատճառներն ու գործընթացները: Միակուսակցական կառավարման համակարգի հաստատման կարևոր պայմաններից էր նաև օպղափարախոսությամբ կոնունիստական հայացքներին մոտ կանգնած կուսակցությունների վերացումը: Հայաստանում այդպիսի կուսակցությունները էին Յնչալյան կուսակցությունը և ՇՄՊԿ-ն: Որոշակի ազգեցություն ունեին նաև էտեները: Խորհրդայնացումից հետո հայ հասարակական-քաղաքական կյանքում էական դերակատարությունն չունեցան բոլժուական ՀԺԿ-ն և ՇՈՍԿ-ն, որոնք արտասահմանում միավորվելով՝ 1921 թ. հինգնեցին ՈԱԿ-ը<sup>43</sup>:

Յնչալյանները ողջունեցին Հայաստանում իշխանությունը բոլշևիկներին անցնելու փաստը և փորձեցին օժանդակել նրանց, չնայած որ արտասահմանյան որոշ կազմակերպություններ համաձայն չէին դրան: 1921 թ. հունվարի 10-ին հնչալյանները թիֆլիսում հրապարակեցին մի շրջաբերական՝ հերթական պատգամավորական ժողով հրավիրելու մասին, սակայն այս տեղի չունեցավ: Իրենց կուսակցությունը պահպանելու ապարդյուն փորձ էր հնչալյանների Կենտրոնական վարչության 1923 թ. փետրվարի 5-ի դիմումը Կոմինտերնի 4-րդ կոնգրեսին նրա շարքերն ընդունելու խորանքով<sup>44</sup>: 1923 թ. հուլիսին Անդրկովկասի Յնչալյան կենտրոնը որոշում է կայացնում. «Լիկվիդացիայի ենթարկել տեղական կազմակերպությունները և ծովալել կոնունիստական կուսակցության հետ»<sup>45</sup>:

ՇՄՊԿ-ն իր օպղափարական ուղղվածությամբ գրեթե չէր տարբերվում ՈՍՊԲ մենշևիլյան թեկից: ՇՄՊԿ-ն երբեք չի ունեցել կազմակերպչորեն ձևավորված կյայուն կառույց, վարել է անընդհատ փոփոխվող մարտավարություն: Յայստի է, որ 1920 թ. սկզբին մի շարք սպեցիֆիկ և մենշևիկ գործիչներ Հայաստանում ստեղծում են իրենց ՄՊԲԿ-ն և մայիսի 20-30-ին այդ կուսակցության կոնֆերանսում ծրագրային փաստարությ է ընդունվում և ընտրվում է Կենտրոնական Կոմիտե: Այդ կուսակցությունը բացասական վերաբերնունք է ցույց տալիս Հայաստանում բոլշևիկների Մայիսյան ապստամբության, ապա նաև խորհրդային կարգերի հաստատման կապակցությամբ, բայց հետագայում փոխում է վերաբերնունքը խորհրդային կարգեր հաստատելու առիթով<sup>46</sup>, ինչը մարտավարական քայլ էր: Այդ կուսակցությունը բոլշևիկների համար վտանգ չէր ներկայացնում, ուստի այն «պաշտոնապես» լուծարելու անհրաժեշտություն չկար:

Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ հայ բոլշևիկների կողմից սպեցիֆիկներն ընկալվում էին որպես հայ առանձնահատուկ մենշևիկներ<sup>47</sup>: Նաև դրանով կարելի է բացարել այն, որ 1927 թ. Հայաստանի անվտանգության մարմինների կողմից բացահայտված երիտասարդական մենշևիլյան կազմակերպության և «Հայկազուններ» խմբի հոգևոր հայրն են համարում սպեցիֆիկ Դ.Անանունում<sup>48</sup>:

Մենշևիկները Հայաստանում լուրջ դրսևորումներ չեն ունեցել, առավել ևս հանդես չեն եկել որպես կազմակերպչորեն կուռ և ազդեցիկ կառույց:

Այսիսով, նոր բոլշևիլյան Հայաստանում սոցիալ-դեմոկրատական տիպի կուսակցություններն ու կազմակերպությունները նույնպես տեղ չգտան:

<sup>43</sup>Տե՛ս Ղազարյան Վ., Ռամկավար Ազատական կուսակցություն.Ուղեցույց և համառոտ պատմություն, Ե., 1991:

<sup>44</sup>ՇԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 244, թ. 1, գ. 248, թ. 1, գ. 275, թ. 1:

<sup>45</sup>Սույն տեղում, ց. 1, գ. 292, թ. 10-17, գ. 290, թ. 2:

<sup>46</sup>ՇԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 70, թ. 1, գ. 75, թ. 1:

<sup>47</sup>ՇԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 66, թ. 15:

<sup>48</sup>ՀՀ ԱԱԾԱ, ԿԳՖ, գ. 12336, հ. 1, թ. 204-278:

Ռուսաստանի էսէռների կուսակցությունը Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ բաժանվեց երկու մասի: Նրա ծախ թևն ընդունեց հեղափոխությունը: 1918 թ. ձախ էսէռները փորձեցին ընդվել բոլշևիկների դեմ, սակայն պարտություն կրեցին: Հայաստանում գործող էսէռները նույնպես պառակտվեցին 1921 թ. փետրվարյան ապստամբությունից հետո: Նրանց աջ թևն անցավ ապստամբների կողմը: Այդ կուսակցության անդամների մյուս, ավելի փոքր մասը՝ ձախները, հենց այդ օրերին ստեղծեցին նոր կազմակերպություն՝ «Հայաստանի սոցիալ-դեմոկրատական (ինտերնացիոնալիստների) կուսակցություն»: Նորաստեղծ ինտերնացիոնալիստների կուսակցությունը նույնպես փորձեց բոլշևիկներին սիրաշահելու միջոցով հասնել կազմակերպության պահպանմանը: Սակայն, 1921 թ. դեկտեմբերին, հասկանալով իրենց թուլությունը, նրանց կազմբյուրոն հայտարարեց այն մասին, որ մարզային Կոմիտեի 1920 թ. դեկտեմբերի 10-ի և Անդրեևրկոմի դեկտեմբերի 15-ի որոշումներով լիկվիդացիայի է ենթարկվել և միաձուվելու կոմունիստական կուսակցության հետ<sup>49</sup>:

Այսպիսով, 1920-ական թվականներին Հայաստանում վերացվեցին բոլոր ոչ պրոլետարական կուսակցություններն ու կազմակերպությունները:

Երրորդ ենթագլխում՝ «Խորհրդային Հայաստանի միակուսակցական կառավարման համակարգի գործունեության հետևանքները» համառոտ քննարկվել է խորհրդային Հայաստանում քաղաքական կուսակցությունների վերացման և միակուսակցական կառավարման հետևանքները: Անցած տարիների միակուսակցական կառավարման համակարգի գաղափարաքաղաքական կյանքի և սովորությի ազդեցությունն իր որոշակի կնիքն է բռնել հետխորհրդային Հայաստանի կուսակցական շինարարության, ինչպես նաև ժողովրդավարական այլ ինստիտուտների ձևավորման վրա, քանի որ քաղաքական կյանքի վրա ազդում էր այդ համակարգում ապրելու իրողությունը, որն իր խոր հետքն է բռնել հատկապես մարդկանց գիտակցության վրա ու շատ դեպքերում ուղղորդում է այս կամ այն վարքագիծը նաև արդի քաղաքական կյանքում:

**Եղրակացություններում ներկայացված են տվյալ հետազոտությունից կատարված ընդհանրացումները, մասնավորապես.**

1. Հայաստանի առաջին հանրապետության գոյության վերջին տարրում բացահայտորեն իրար դեմ կանգնեցին դաշնակցականներն ու բոլշևիկները: Դա փաստացի առճակատում էր իշխանության համար, պայքար, որը շարունակվեց մինչև խորհրդային իշխանության փլուզումը Հայաստանում:

2. Միակուսակցական կառավարման համակարգը ամբողջատիրության հաստատման առաջին և գլխավոր պայմանն է, ուստի խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը, որն անքակտելի էր ԽՍՀՄ-ում ընթացող քաղաքական զարգացումներից, նույնպես ընթացավ մենիշխանության ու ամբողջատիրության հաստատման ճանապարհով և չեր կարող այլ կերպ ընթանալ:

3. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման գործընթաց է տեղի ունեցել, որը սկսվել է 1920 թ. նոյեմբերի 29-ին, երբ Հայաստանի Ուազմհեղկոմն հայտարարեց այդ մասին, ապա դեկտեմբերի 2-ին ՀՀ կառավարությունը իշխանությունը կամավոր փոխանցեց Ուազմհեղկոմին, հետագայում կազմավորվում են խորհրդները, որոնց առաջին համագումարում՝ 1922 թ. հունվար-փետրվար ամիսներին ձևավորվում են Խորհրդների ու կառավարության դեկավար մարմինները:

4. Կոմկուսի մենիշխանությունը, որը 1920-ական թվականների վերջերից և 1930-ական թվականների սկզբներից օրինականացրեց ԽՍՀՄ-ը, բնականաբար և նրա

<sup>49</sup>ՀԱԱ, ֆ. 1021, գ. 7, զ. 59, թ. 3-5, ֆ. 1, գ. 2, զ. 57, թ. 1:

մասը կազմող Հայաստանը, Երկիրը տարավ դեպի տոտալիտարիզմ: Կյանքի բոլոր ոլորտներում իրագրոջվող քայլերի նախն որոշումները սկսեցին կայացնել կուսակցական մարմինները և դրանց իրականացումն ու վերահսկողությունն ամբողջովին դրվեց այդ մարմինների վրա:

5.Կատարված ուսումնասիրություններից կարելի է եզրակացնել, որ Խորհրդային Հայաստանում կենտրոնացված կառավարման համակարգի հաստատումը պայմանավորված էր ինչպես Երկիրը ծանր վիճակից դրւու հանելու, այնպես էլ բոլցկիկյան գաղափարախոսությունից ու ծրագրերից բխող հանգամանքներով: Խորհրդային Հայաստանի իշխանությունները կատարում էին այն ամենն ինչ հրահանգավորվում ու թելադրվում էր Ուսուսատանից: Ժամանակի ընթացքում Երկրի վիճակի կայունացումից ու բարելավումից հետո կենտրոնացած պետական կառավարումը ոչ միայն պահպանվեց, այլև խորհրդային Երկիրը տարավ ամբողջատիրության:

6.Հայաստանում միակուսակցական համակարգի հաստատմանը նպաստում էր նաև Թուրքիայի գործոնը, որը միջազգային պայմանագրերով ուղղակի պարտադրում էր Հայաստանի տարածքում արգելել բոլոր հակառարքական կազմակերպությունները: Քարկ է ի նկատի ունենալ նաև Իրանի գործոնը, որը, թույլատրելով իր տարածքում հիմնավորվելու և այնտեղից հակախորհրդային գործունեություն ծավալելու ՀՅԴ-ին, իշխանություններին անուղղակի դրդում էր այդ կուսակցության վերացմանը:

7.Ոչ պրոլետարական կուսակցությունների գաղափարական ջախջախման և կազմակերպչորեն վերացման համար 1920-ական թթ. սկզբից գործադրվեցին խորհրդայնացված հանրապետություններում դրա իրականացման ընդհանուր միջոցառումներ: Հայաստանի կոմկուսը նույնպես ձեռնամուխ եղավ այդ քաղաքականության կենսագործմանը, սկսվեցին կուսակցությունների նկատմանը դատավարություններն ու լուծարումները: Դրանցում հիմնական վլաքն ուղղված էր դեռևս որոշակի իրական ազդեցություն պահպանած ՀՅԴ-ի դեմ:

8.Խորհրդային Հայաստանը 1920-1922 թթ. թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության հիմնահարցերում, թեև հիմնականում առաջնորդվում էր ՌԿ(թ)Կ ԿԿ-ի որոշումներով, այնուհանդերձ, մինչև Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմավորումը Հայաստանը ուներ ինքնիշխան կարգավիճակ, միջայտական պայմանագրային հարաբերություններ էր հաստատել մի քանի պետությունների հետ, միջազգային իրավական ճանաչում ստացել նրանց կողմից:

9.ՀՅԴ-ը 1920-ականներին փորձում էր գաղտնի գործունեություն ծավալել Հայաստանում: Սակայն, խորհրդային իշխանության դիրքերի անրապնդման հետ, գրեթե ամբողջապես վերանում են նաև աշխատանքների հնարավորությունները Հայաստանում: 1930-ականների սկզբներին՝ համատարած կոլեկտիվացման տարիներին, ապա 1936-1938 թթ. ստալինյան բռնությունների տարիներին, ՀՅԴ-ն փաստորեն գրկվեց Խորհրդային Հայաստանի տարածքում որևէ գործունեություն կատարելու հնարավորությունից:

10.ՀՅԴ-ի և նյուտ քաղաքական կուսակցությունների վերացմանը զուգահեռ Հայաստանում ձևավորվեց միակուսակցական կառավարման համակարգ, այնուհետև՝ ամբողջատիրական քաղաքական համակարգ: Տեսականորեն միայն ՀՅԴ-ն ուներ որոշակի ներուժ խանգարելու դրան, սակայն կյանքի օբյեկտիվ պայմանները թույլ չտվեցին նրան դա կատարել:

11.1920-ականներին Հայաստանում վերացվեցին բոլոր ազգային, ոչ պրոլետարական կազմակերպությունները, ինչը բարենպաստ պայմաններ ստեղծեց ամբողջատիրական քաղաքական համակարգի հաստատման համար:

12. Ժամանակակից Յայաստանի հասարակական-քաղաքական կյանքի վրա իր ազդեցությունն է բողել ԽՄՀՍ-ի միակուսակցական համակարգի պայմաններում ապրելը, որը հատկապես իր խոր հետքն է բողել մարդկանց գիտակցության, մտածելակերպի ու հոգեբանության վրա ու շատ դեպքերում ուղղողում է նրանց այս կամ այն վարչագիծը նաև մեր օրերում:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկում ներկայացված են ատենախոսության մեջ օգտագործված արխիվային նյութերը, սկզբնաղբյուրները, պարբերական մամուլը, գրականությունը:

**Աշխատանքի հիմնական դրույթներով** հանդես ենք եկել մի քանի գիտաժողովներում և հրապարակել հոդվածներ.

1.Խորհրդային Յայաստանում միակուսակցական կառավարման համակարգի հաստատման թուրքական գործոնի շուրջ, Յայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 11, Երևան, ՀՀ ԳԱԱ Պի., 2010, էջ 305-314:

2.Ոչ պրոլետարական կուսակցությունների վերացման գործընթացների սկիզբը Խորհրդային Յայաստանում, Պատմություն և մշակույթ, Յայագիտական հանդես, (գիտական հոդվածների ժողովածու), հ. Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 225-232:

3.Խորհրդային կարգերի հաստատումը և միակուսակցական համակարգի ձևավորման յուրահատկությունները Խորհրդային Յայաստանում 1920-ական թվականներին, Յայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 12, Երևան, ՀՀ ԳԱԱ Պի., 2012, էջ 237-254:

4.Խորհրդային Յայաստանի միակուսակցական կառավարման համակարգի ձևավորումը և գործունեության հետևանքները, 21-րդ դար, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 1, Երևան, 2012, էջ 104-110:

## **МАНУКЯН АРАМ АРМЕНАКОВИЧ**

### **Ликвидация политических партий в Советской Армении в 1920-х гг.**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 15 июня 2012 г. в 14<sup>00</sup>, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

### **РЕЗЮМЕ**

Диссертация посвящена проблеме ликвидации непролетарских политических партий и организаций и становлению однопартийной системы правления в Советской Армении в 1920-х гг. Данный вопрос до сих пор не был предметом отдельного изучения. Тема работы актуальна тем, что последствия однопартийного правления в советские времена проявились в годы независимости Армении, поэтому необходимо знать причины их возникновения и ход развития, чтобы не повторить ошибок в будущем. Исследование проведено на основании архивных материалов, некоторые из которых впервые внедрены в научный оборот, опубликованных первоисточников, монографии и других научных работ.

Исследование состоит из введения, трех глав (8-и подзаглавий), выводов и списка использованной литературы.

В введении представлены актуальность, научное новшество, цели и задачи, степень изученности, обзор источников и литературы исследования.

В первой главе «Политические партии в Армении накануне установлений советской власти» представлены политические партии, действующие в Армении перед передачей власти большевикам. Особое внимание обращено отношениям между правящей партией Дашиакцутюн и большевиками. Нами предложено рассмотреть установление Советской власти в Армении как процесс, который начался 29 ноября 1920г. с разглашения об установлении советской власти со стороны Армревкому. Далее, 2 декабря 1920 г. Ереванским соглашением дашиакское правительство передало власть Армревкому, а процесс юридически завершился только с созданием Советов и проведением 1 Съезда Советов Армении в январе-феврале 1922 г., когда фактическая власть от Армревкому

перешла к Советам. Проведены сравнения данного процесса с аналогичными процессами в России, Украине, Грузии и Азербайджане, указанием на некоторых их различий.

Вторая глава «Факторы способствующие формированию однопартийной формы правления и идеологические основы ликвидации непролетарских партий» посвящена вышеуказанным проблемам. Кроме основных факторов ликвидаций армянских партий и установления однопартийной системы правления в Армении, которыми являлись тяжелое внутреннее и внешнее положение республики и непосредственное влияние большевиков России, впервые обратили внимание и на такие внешние факторы, как Турция и Иран. В частности, по требованию турецкой стороны в Московский и Карский договоры 1921 г. были включены пункты, требующие запрещения деятельности на территории Армении тех организаций, которые действуют против Турции (соответственно п.п. 8 и 10). А Иран разрешил на своей территории деятельность антисоветской партии Дашнакцутюн, которая вела практическую работу против Армении. Этим косвенно вынудили большевиков ускорить процесс их ликвидации.

В третьей главе «Процесс ликвидации непролетарских политических партий и организаций и их последствия» подробно представлен процесс ликвидации армянских и других непролетарских партий и организаций, в частности, дашнаков, гничаков, социал-демократов (спецификов), эсэров, меньшевиков, социал-демократов (интернационалистов) и др. Особое внимание обращено на организаторскую роль большевиков в данном процессе и их отношению к вышеуказанным партиям. Сделаны ряд выводов, в том числе о том, что данный процесс имел не только субъективные, но и объективные причины, т.к. исторический опыт показывает, что в тяжелые времена спасение любого государства происходит путем концентрации власти. Другой вопрос, какие порядки устанавливаются после этого. Жизнь в условиях однопартийного правления отрицательно повлияла на психологию и поведение населения независимой Армении, в частности, на ход установления демократических институтов и др.

В заключении диссертации обобщены основные результаты и выводы исследования.

## **MANUKYAN ARAM ARMENAK**

### **The liquidation of political parties in Soviet Armenia in the 1920s**

Dissertation for the degree Doktor of History on specialization of “History of Armenia”  
07.00.01.

The defense of the dissertation will be held on 15 June 2012, 14<sup>00</sup> at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

#### **SUMMARY**

The subject matter of the thesis is the liquidation of non-proletarian political parties and organizations and the establishment of a single-party regime in Soviet Armenia in the 1920s. The issue has not been under a separate study. Relevance and actuality of the research is based on the fact that the consequences of a single-party regime of the Soviet times were revealed in the years of independence of Armenia, so it is necessary to understand their causes and course of development, so as not to repeat the same mistakes in the future. The study was conducted on the basis of published primary sources, monographs and other research materials, as well as on archival materials, some of which were introduced to the scientific use for the first time. The study consists of an introduction, three chapters (8 subchapters), conclusions and a bibliography.

The introduction presents actuality, newness, basic goals and objectives of the proposed subject, the degree of scrutiny, and the review of scientific literature used in the research.

The first chapter, “Political parties in Armenia prior to establishment of the Soviet regime”, describes functioning political parties of Armenia before the transfer of power to Bolsheviks. Special attention is paid to the relations between the ruling party and the Bolshevik Faction. We proposed to consider the establishment of Soviet power in Armenia as a process that began on 29 November, 1920 with the proclamation of Soviet power by Armrevkom. Then, on December 2, 1920 by the Treaty of Yerevan, Dashnak government handed over the power to Armrevkom, and the process was legally completed only with the creation of the Union and organization of the Soviet Congress in Armenia in January-February 1922, when the actual power from Armrevkom passed to the Soviet Union. The research also compares this process with the

similar processes in Russia, Ukraine, Georgia and Azerbaijan, pointing out some of the underlying differences.

The second chapter, “Factors contributing to the formation of single-party regime and ideological foundations of the liquidation of non-proletarian parties”, is dedicated to the above mentioned problems. Besides main factors, including the heavy internal and external burden of the republic and the direct influence of the Russian Bolsheviks, which led to eradication of Armenian political parties and establishing a single-party regime in Armenia, the external factors such as Turkey and Iran were considered in the research for the first time. Thus, on demand of the Turkish side, the 1921 Treaties of Moscow and Kars included paragraphs that required to ban the activity of those organizations on the territory of Armenia, that acted against Turkey (respectively p.p. 8 and 10). And Iran allowed anti-Soviet activities of the Dashnak party on its territory, which led practical work against Armenia. This indirectly forced the Bolsheviks to accelerate the process of their elimination.

The third chapter, “The process of liquidation of non-proletarian political parties and organizations and their consequences”, presents a detailed overview of the process of liquidation of Armenian and other non-proletarian parties and organizations, particularly, Dashnaks, Hnchaks, the Social Democrats (specifics), Socialist-Revolutionaries, Mensheviks, the Social Democrats (Internationalists) and others. Special attention is paid to the organizational role and attitudes of the Bolsheviks in the process and towards the aforementioned parties. There has been drawn a number of conclusions, including those that regard the process as caused not only by subjective, but also by objective reasons, because Historical evidence shows that in tough times any statehood is protected by the concentration of power. What orders are established after that is another story, of course. Life in a single-party regime adversely affected the psychology and behavior of the population of independent Armenia, particularly affecting the course of establishing democratic institutions, etc.

In conclusion, the thesis summarizes the main results and conclusions of the study.